

**ՀՀ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
Խ.ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱԿՈՔ ՍԱՄՎԵԼԻ

**ԱՆԻՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ**

**ԺԳ.00.02 «Դաստիարակության և դասավանդման մեթոդիկա»
(կերպարվեստ) մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2018

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Լ.Ս.Ներսիսյան**

Պաշտոնական ընդհիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, **Յու. Վ. Յուզբաշյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ս. Մ. Ասատրյան**

Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. մայիսի 30-ին. ժամը 12-00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՒՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. Ապրիլի 27-ին:

Գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Ա.Հ.Սվաջյան



ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Համատարած տեղեկատվայինացման պայմաններում կրթությունը դարձել է հեռավար և լիարժեք չէ առանց մեդիակրթության: Ակներև է մանկավարժների մեդիագրագիտության ոչ բավարար ձևավորվածությունը: Ելնելով ապագա մանկավարժների մեդիագրագիտության ձևավորման անհրաժեշտությունից գտնում ենք որ, սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է՝

- «Մեդիակրթություն» կամընտրական հատուկ դասընթացի շրջանակներում մեթոդական մոդելի կառուցման անհրաժեշտությամբ, որը կնպաստի մանկավարժական բուհի ուսանողների մեդիագրագիտության արդյունավետ ձևավորմանը:

- «Անիմացիայի հիմունքները» հատուկ դասընթացի ՀՊՄՀ «Կուլտուրայի» և «Գեղարվեստական կրթության» ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերում ներառելու պահանջվածությամբ:

- Մանկավարժական բուհի ուսանողների շրջանում անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման կարողությունների և նրանց մեդիագրագիտության ձևավորմանը նպաստող արդյունավետ մեթոդների և մեթոդական համակարգերի անբավարար մշակվածությամբ:

Հեղազոտության նպատակը: Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորումն է:

Հեղազոտության օբյեկտը: Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման գործընթացն է:

Հեղազոտության առարկան: Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելն է:

Հեղազոտության գիտական վարկածը հիմնվում է այն ենթադրության վրա, որ **եթե՝**

- մշակվի և ՀՊՄՀ ուսումնական գործընթացում ներդրվի «Մեդիակրթություն» հատուկ դասընթացը,
- մշակվի անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելը,
- ստեղծվի մեդիակրթական եզրույթների և հասկացությունների բացատրական բառարան,

- մշակվեն մեդիակրթական պարապմունքների կազմակերպման և իրացման արդյունավետ եղանակներ՝ առցանց ֆորումներ, մեդիաակումբային քննարկումներ, ճակատային հարցումներ, փոփոխված տրամաբանական մեդիաշղթաների կառուցարկում, նախագծում կամ տարաչափ մոդելավորում,

- սահմանվեն անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման գործընթացում ուսանողների մեդիագրագիտության ձևավորվածության մակարդակներն ու դրանք որոշող չափանիշներն ու ցուցանիշները,

ապա կապահովվի մանկավարժական բուհի ուսանողների մեդիագրագիտության ձևավորման արդյունավետությունը:

Ըստ **նպատակադրման** և առաջ քաշված **վարկածի** առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝**

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ առկա հետազոտություններն ու համապատասխան գիտական աղբյուրները, անիմացիոն դպրոցների փորձը, անիմացիայի դասական և ժամանակակից տեխնոլոգիաներն ու համակարգչային տարաչափ ծրագրերը:

2. Մշակել և ՀՊՄՀ ուսումնական գործընթացում ներդնել «Մեդիակրթություն» հատուկ դասընթացը:

3. Մշակել և ուսումնական գործընթացում ներդնել անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելն ու մեդիակրթական եզրույթների և հասկացությունների բացատրական բառարանը:

4. Մշակել մեդիակրթական պարապմունքների կազմակերպման և իրացման արդյունավետ եղանակներ՝ առցանց ֆորումներ, մեդիաակումբային քննարկումներ, ճակատային հարցումներ, փոփոխված տրամաբանական մեդիաշղթաների կառուցարկում, նախագծում կամ տարաչափ մոդելավորում:

5. Սահմանել անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման գործընթացում ուսանողների մեդիագրագիտության ձևավորվածության մակարդակներն ու դրանք որոշող չափանիշներն ու ցուցանիշները:

6. Փորձարկման արդյունքներով հիմնավորել մշակված անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման մեթոդական մոդելի և մեդիակրթական եզրույթների բացատրական բառարանի արդյունավետությունը մանկավարժական բուհի ուսանողների մեդիագրագիտության ձևավորման գործընթացում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են՝ Լ.Ս. Ներսիսյանի, Գ.Լ.Եղիազարյանի, Լ.Ս.Երիցյանի, Հ.Մ.Մուկուչյանի, Մ.Ա. Մկրտչյանի, Մ.Գ. Աստվածատրյանի, Ա.Գ. Ասմոլովի, Օ.Ս. Գազմանի, Պ.Ք. Գալպերինի, Վ.Վ. Դավիդովի, Վ.Վ. Կրանսկու, Ն.Վ. Կուզմինայի, Մ.Ն. Սկատկինի, Վ.Ա. Սլաստենինի, Վ.Դ. Շադրիկովի Բ. Խոզարդի, Մ. Տավոնատիի, Ե. Բարչայի, Բ. Գոտֆրիդի, Ն.Գ. Լիի, Ա.Պ. Կորոչենսկու, Լ.Կ.Շիյանի, Մ.Ն. Ֆոմինովայի, Ե.Վ. Յակուշինայի Ե.Վ. Բոնդարևսկայայի, Ա.Ռ. Գևորգյանի, Ա.Ս. Խոտոյանի և այլոց տարբեր տեսություններ և հայեցակարգեր ներկայացնող աշխատություններ:

Հետազոտության մեթոդները:

➤ **Տեսական՝** հոգեբանական, մանկավարժական, մեթոդական, արվեստագիտական մասնագիտական գրականության ուսումնասիրում և վերլուծություն:

➤ **Էմպիրիկ՝** դիտարկում, ուսանողների անկետավորում, թեստավորում, հարցում, (հայտորոշիչ և ստուգիչ) փորձարարական ուսուցում, մոդելավորում:

➤ **Վիճակագրական՝** թեստավորման և փորձարարական ուսուցման արդյունքների քանակական և որակական տվյալների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորոյթը կայանում է նրանում, որ՝

- Մշակվել է «Մեդիակրթություն» հատուկ դասընթացը:
- Մշակվել է անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելը:
- Ստեղծվել է մեդիակրթական եզրույթների և հասկացությունների բացատրական բառարանը:
- Մշակվել են մեդիակրթական պարապմունքների կազմակերպման և իրացման արդյունավետ եղանակներ՝ առցանց ֆորումներ, մեդիաակումբային քննարկումներ, ճակատային հարցումներ, փոփոխված տրամաբանական մեդիաշղթաների կառուցարկում, նախագծում կամ տարաչափ մոդելավորում:
- Սահմանվել են անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման գործընթացում ուսանողների մեդիագրագիտության ձևավորվածության մակարդակներն ու դրանք որոշող չափանիշներն ու ցուցանիշերը:
- Փորձարկման արդյունքներով հիմնավորվել է մշակված անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելի ու մեդիակրթական եզրույթներին հասկացությունների

բացատրական բառարանի արդյունավետությունը մանկավարժական բուհի ուսանողների մեդիագրագիտության ձևավորման գործընթացում:

Հետազոտության տեսական նշանակությունը արտահատված է՝

❖ «Մեդիակրթություն» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակմամբ, որը ուսանողների մեդիագրագիտության ձևավորման տեսական հիմքն է:

❖ Մեդիակրթական եզրույթների և հասկացությունների բացատրական բառարանի ստեղծմամբ, որտեղ հստակեցվել է «անիմացիա» և «մեդիագրագիտություն» եզրույթների ձևակերպումներն ու բացատրվել է այդ հասկացությունների էությունը:

❖ Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելի տեսական հիմնավորմամբ:

❖ Ռիսանոդների մեդիագրագիտության ձևավորման նպատակով, անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ մեդիակրթական պարապմունքների կազմակերպման և իրացման արդյունավետ ձևերի և եղանակների համակարգմամբ:

❖ Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ուսանողների մեդիագրագիտության ձևավորվածության մակարդակների և դրանք որոշող չափանիշների ու ցուցանիշների սահմանմամբ:

❖ Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման տեսության և պրակտիկայի փոխկապակցվածությամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով որ հետազոտության արդյունքները կարող են՝

➢ Կիրառվել մանկավարժական այլ բուհերում, կերպարվեստի ոլորտներում և մեդիա դաշտում:

➢ Ընդգրկվել ՀՊՄՀ «Կուլտուրայի» և «Գեղարվեստական կրթության» ֆակուլտետների ուսումնական ծրագրերում:

➢ Օգտագործվել դասախոսների և ուսուչիչների մեդիագրագիտության ձևավորման և նրանց մասնագիտական իրազեկությունների մակարդակի բարձրացմանն ուղղված վերապատրաստումների գործընթացում:

➢ Նպաստել ՀՊՄՀ ուսանողների շարունակական և մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և իրականացման արդյունավետությանը:

➤ Գործածվել ՀՊՄՀ ուսանողների մեդիագրագիտության ձևավորվածության մակարդակի որոշման նպատակով:

➤ Ծառայեցվել բարձրագույն կրթության համակարգում անիմացիոն տեղնոլոգիաների ներդրմանն ու դրանց կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորմանը:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլերով՝

Առաջին փուլում (2015-2016թթ.) ուսումնասիրվել ու տեսական վերլուծության են ենթարկվել հետազոտության հիմնախնդիրին վերաբերվող գիտական աղբյուրներ, բացահայտվել է հիմնահարցի մշակվածության աստիճանը, մշակվել է հետազոտության գիտական ապարատը:

Երկրորդ փուլում (2016-2017թթ.) քննության են առնվել մեդիակրթության ոլորտում և կրթական այլ գործընթացում անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման տեսությունը և պրակտիկան ՀՀ-ում, որոշակիացվել է մեր դիրքորոշումը:

Երրորդ փուլում (2017-2018թթ.) մեր հետազոտությունն ուղղվել է անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելի ու մեդիակրթական եզրույթների և հասկացությունների բացատրական բարառանի ներդրմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման գործընթացի արդյունավետության փորձարարական ստուգմանը: Իրացվել են փորձարարական հետազոտություններ, մշակվել են մեթոդական հանձնարարականներ շարադրվել է ատենախոսության բովանդակությունն ու հստակեցվել կառուցվածքը:

Պաշտպանության են ներկայացվում հայեցակարգային հետևյալ դրույթները՝

• Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման մեթոդական մոդելը նպաստում է ուսանողների մեդիագրագիտության ձևավորմանը:

• «Մեդիակրթություն» հատուկ դասընթացն ու նրա մասը կազմող «Մեդիակրթական եզրույթների և հասկացությունների բացատրական բառարան»-ը, հանդիսանում է ուսանողների մեդիակրթական կայուն գիտելիքների ձևավորման, մեդիատեխնոլոգիական կիրառական կարողությունների ու գործնական հմտությունների զարգացման հիմքը:

• Մեդիակրթական պարապմունքների կազմակերպման և իրացման եղանակները հնարավորություն են ընձեռում մեդիամանկավարժների կողմից ուսուցման փոխներգործուն մեթոդների լայնածավալ կիրառման և ուսանողների շրջանում անիմացիոն տեխնոլոգիաների և տարաչափ ծրագրերի արդյունավետ յուրացման համար:

• «Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդել»-ի գործածմամբ, չափելի է դառնում ուսանողների մեդիագրագիտության ձևավորվածության մակարդակը:

• «Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդել»-ը կրում է անձնակենտրոն բնույթ:

• Մեդիագրագիտությունը ժամանակակից մանկավարժի մասնագիտական գործիմացության տեխնոլոգիական համակարգի հենքային իրազեկությունն է:

Հետազոտության արդյունքները ներդրվել և փորձարկվել են՝ «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի, «ԱՅԲ» ավագ դպրոցի, «Սահակյանց անիմացիոն արվեստանոցի» և ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսերում իրացվող ուսումնամեթոդական գործընթացներում: Ատենախոսությունը քննարկվել է ՀՊՄՀ Կերպարվեստի ու Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոններում, հետազոտության արդյունքները ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են տպագրված յոթ հրապարակումներում (տես ատենախոսության սեղմագրի վերջում ներկայացված հրապարակումների անվանացանկը):

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, 175 անուն օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 161 համակարգչային էջ է (առանց հավելվածների), պարունակում է 1 աղյուսակ, 1 նկար, 1 գծապատկեր, 6 մոդել, 11 տրամագիր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածական մասում ներկայացված են հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, հետազոտության

վարկաճը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները:

Առաջին՝ **«Մեդիակրթության ոլորտում ուսանողների մեդիագրագիտության ձևավորման գիտատեսական և մեթոդաբանական հիմունքները»** գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին՝ **«Մեդիակրթության ոլորտում ուսանողների մեդիագրագիտության ձևավորման նախադրյալներն ու զարգացման օրինաչափությունները»**, ենթագլխում քննարկել ենք մեդիակրթության և այդ գործընթացում ուսանողների մեդիագրագիտության ձևավորման նախադրյալներն ու զարգացման օրինաչափությունները տարբեր երկրներում և մասնավորապես Հայաստանում:

Երկրորդ՝ **«Անիմացիոն տեխնոլոգիաների ստեղծման և զարգացման պատմական փուլերը»** ենթագլխում քննության է առնվել «Անիմացիա»-ն, դիտարկվելով որպես հասկացություն, երևույթ, եզրույթ և տեխնոլոգիա, հանգամանալից վերլուծության են ենթարկվել, անիմացիոն տեխնոլոգիաների, դասական և ժամանակակից անիմացիայի առանձնահատկությունները և մուլտիպլիկացիոն արվեստի ստեղծման ու զարգացման պատմական փուլերը, ըստ երկրների և հեղինակային դպրոցների: Մանրամասն ներկայացվել է նաև Հայկական անիմացիայի պատմությունը, անդրադարձ է կատարվել հայ մուլտիպլիկատորներին և նրանց հիմնած անիմացիոն դպրոցներին:

Երկրորդ՝ **«Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդիկական մանկավարժական բուհում»** գլխուխը բաղկացած է չորս ենթագլխից, որտեղ ամբողջությամբ արտացոլվել է հետազոտության բուն մեթոդաբանությունը:

Առաջին՝ **«Մեդիագրագիտության էությունն ու կառուցվածքային բաղադրիչները»** ենթագլխում հայտնել ենք այն համոզմունքը, որ անիմացիոն տեխնոլոգիաների կիրառումն ու նրաց միջոցով ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդիկայի իրացման արդյունավետությունը մանկավարժական բուհում ապահովվում է, «Մեդիակրթություն» կամընտրական հատուկ դասընթացի շրջանակներում, մեդիակրթական պարապմունքների պատշաճ կազմակերպման պայմաններում:

Հիմք ընդունելով ուսանողների մեդիագրագիտության ձևավորման գործընթացում անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման դերն ու նշանակությունը, դիտարկել ենք այն իբրև ուսանողների մեդիագրագիտության ձևավորման արդյունավետ մեթոդ: Համարելով մեդիագրագիտությունը ժամանակակից մանկավարժի հենքային իրազեկություն, սահմանել ենք նրա կառուցվածքային բաղադրիչները և ներկայացրել էությունը **մոդելով (հավելված 1. մոդել 1):**

Երկրորդ՝ **«Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառումը որպես ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդ»** ենթագլխում առանձնացրել ենք անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման ձևերն ու մեդիակրթական պարապմունքների կազմակերպման եղանակները: Հիմնավորել ենք, որ ուսանողների կողմից, անիմացիոն տեխնոլոգիաների յուրացման և դրանց կիրառմամբ նրանց մեդիագրագիտության ձևավորման գործընթացում մեդիակրթական պարապմունքների կազմակերպման ներկայացված ձևերի և եղանակների արդյունավետությունը դրսևորվում է երեք մակարդակներով՝ համադիդակտիկական մակարդակ, մասնավոր մեթոդական (առարկայական) մակարդակ, մոդուլային մակարդակ:

Երրորդ՝ **«Տեխնոդաստիարակությունը որպես մեդիագրագետ ուսանողների ձևավորման նոր ուղղություն»** ենթագլխում փաստել ենք, որ մեդիակրթության զարգացման արդի ժամանակահատվածում ձևավորվում է կիրառական իմացության այնպիսի նոր բնագավառ, ինչպիսին է տեխնոդաստիարակությունը, որի իրացման պայմաններում, փոփոխելով դաստիարակչական շեշտադրումները, ուսանողը մեդիատեխնոլոգիաների շարքային սպառողից վերածվում է մեդիահաղորդակցական բարդ և բազմաշերտ գործընթացի ակտիվ և մեդիագրագետ սուբյեկտի:

Չորրորդ՝ **«Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելի կառուցվածքն ու բաղադրամասերը»** ենթագլխում մշակել, մոդելավորել և համակարգային վերլուծության ենք ենթարկել անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելը **(հավելված 1. մոդել 2):**

Այն մեթոդական համակարգ է, որը բաղկացած է միմիանց համաենթակա կառուցվածքային երեք բաղադրամասից ու դրանք ամբողջացնող երկու բաղադրատարրից:

- **Նպատակը՝** որը հանդիսանում է մոդելի բաղադրամաս և կանխորոշում ուսումնական գործընթացում նրա ներդրման ակնկալվող վերջնարդյունքը **(հավելված 1. մոդել 3):**

- **Ոլորտները՝** որոնք նպատակը ամբողջացնող բաղադրատարրեր են, քանզի որոշակիացնում են նրա իրագործման համար ընտրված առավել նպաստավոր հարթակները **(հավելված 1. մոդել 4.):**

- **Մեթոդները՝** որոնք, կազմելով մոդելի բաղադրամաս տեսանելի են դարձնում նպատակի իրագործման ձևերն ու եղանակները **(հավելված 1. մոդել 5.):**

- **Ուղղությունները՝** որոնք ընտրված մեթոդներն ամբողջացնող և դրանց կիրառման ուղղությունները նախանշող բաղադրատարրեր են **(հավելված 1. մոդել 6.):**


- **Գնահատումն ու արժևորումը՝** որը նպատակի իրագործման արդյունքները ամփոփող և ուսանողների մեդիագրագիտության ձևավորվածության մակարդակները չափելի դարձնող բաղադրամասն է **(հավելված 1. աղյուսակ 1. գծապատկեր 1):**

Երրորդ՝ «Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելի փորձարարական հիմնավորումը» գլուխը ներառում է երկու ենթագլուխ: Գլխի մուտքում, մանկավարժական բուհի ուսանողների մեդիագրագիտության ձևավորման գործընթացը համարել ենք բարձրագույն դպրոցի մանկավարժության արդիական և գերակա խնդիր, որի լուծումը տեսել ենք բուհի տարբեր և հատկապես «Գեղարվեստական կրթության» ու «Կուլտուրայի» ֆակուլտետների ուսումնական ծրագրերում «Մեդիակրթություն» կամընտրական հատուկ դասընթացի ներառման մեջ: 2015-2018 թթ.-ին ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրիատի առկա և հեռակա բաժինների ավարտական կուրսերում դասընթացի արդյունավետ իրացման փորձից ելնելով, նշել ենք, որ ուսումնասիրվող


ուժ մոդուլներից, ուսանողներն առավել մեծ հետաքրքրություն են ցուցաբերում յոթերորդ՝ «Անհմացիոն հմտությունների ձևավորման մեղիատեխնոլոգիաներ և տարաչափ ծրագրեր» մոդուլի ուսումնասիրման նկատմամբ:

Առաջին՝ «Անհմացիոն տեխնոլոգիաների կիրառման ուսանողների մեղիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելի ներդրումն ու փորձարկման արդյունավետության ցուցանիշները» ենթազլխում մանրամասն նկարագրել և վերլուծել ենք փորձարարական աշխատանքների ընթացքը, որում ներգրավվել են ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրիատի, տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա ու նախադպրոցական մանկավարժություն և հոգեբանություն բաժինների չորրորդ կուրսերի 100 ուսանող: Արձանագրվեց, որ, ուսուցման սկզբնական ժամանակահատվածում, ընտրված դասընթացն ուսումնասիրողիսլու պատրաստակամություն և դրական դիրքորոշում դրսևտեցին ուսանողների 40%, իսկ գործընթացի արդյունավետության նկատմամբ թերիավատորեն տրամադրվեցին նրանց 60%-ը: Համապատասխանաբար, դասընթացի ավարտին, իրացված փորձարարական աշխատանքների շրջանակներում, անհմացիոն տեխնոլոգիաների կիրառման ուսանողների մեղիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելի ներդրման արդյունքում, փաստեցինք նախնական տվյալների զգալի դրական փոփոխություն, ինչուվ և հիմնավորվեց մոդելի կիրառման արդյունավետությունը:


ՏՐԱՄԱԳԻՐ 1. Մանկավարժական անհմացիայի ուսումնասիրման ուսանողների ակնկալիքները «Մեղիակրթություն» հատուկ դասընթացի մեկնարկային փուլում:



ՏՐԱՄԱԳԻՐ 2. Մանկավարժական անհիմացիայի ուսումնասիրման վերաբերյալ ուսանողների դիրքորոշումները «Մեդիակրթություն» հատուկ դասընթացի շրջանակներում «Անհիմացիոն հմտությունների ձևավորման մեդիատեխնոլոգիաներ և տարաչափ ծրագրեր» մոդուլի յուրացման փուլում:



ՏՐԱՄԱԳԻՐ 3. Մանկավարժական անհիմացիայի ուսումնասիրման արդյունքում ուսանողների մեդիագրագիտության ձևավորվածության մակարդակը «Մեդիակրթություն» հատուկ դասընթացի ավարտական փուլում:




Երկրորդ՝ «Փորձարարական աշխատանքների արդյունքների մշակումն ու վերլուծությունը» ենթաալյում ներկայացրել ենք, ուսումնական գործընթացում, մեր մեթոդական մոդելի ներդրման միջոցով, գիտափորձին մասնակցած

ուսանողների մեղիագրագիտության ձևավորման արդյունավետությունը, վերլուծելով ձևավորվածության մակարդակի չափման յուրաքանչյուր ցուցանիշը:

1. Ուսանողների մեղիագրագիտության ձևավորվածության հաղորդակցական ցուցանիշը գիտափորձի մեկնարկային փուլում:
2. Ուսանողների մեղիագրագիտության ձևավորվածության դրդապատճառային ցուցանիշը գիտափորձի արձանագրող և ձևավորող փուլերում:
3. Մեղիագրագիտության ձևավորվածության տեղեկատվական, անիմացիոն տեխնոլոգիաների և տարաչափ ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության ցուցանիշ:
4. Մեղիաարտադրանքի հասարակական, կրթական, գեղագիտական, գեղարվեստական, տեխնոլոգիաարակազմական հատկանիշների արժևորման ցուցանիշը գիտափորձի արձանագրող և ձևավորող փուլերում:
5. Անիմացիոն արվեստի ոլորտում ձեռք բերված կիրառական հմտությունների ցուցանիշը գիտափորձի ավարտին:

ՏՐԱՄԱԳԻՐ 4 «Անիմացիոն տեխնոլոգիաների կիռարման ուսանողների մեղիագրագիտության ձևավորման մեթոդական մոդելի»-ի և բացատրական բառարանի ներդրման ու փորձարկման արդյունավետությունը հավաստող արդյունքները



Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իրացված փորձարարական աշխատանքների արդյունքների ամփոփմամբ հաստատվել են՝ «Անիմացիոն տեխնոլոգիաների կիռարմամբ ուսանողների մեղիագրագիտության ձևավորման հիմնախնդիրը մանկավարժական բուհում» հետազոտության աշխատանքային

վարկածի հավաստիությունը, առաջարկվող մեթոդական մոդելի և բացատրական բառարանի արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված հետազոտության վերլուծությունից բխում են հետևյալ եզրակացությունները.

1. Մանկավարժական բուհում ուսանողների մեդիագրագիտության ձևավորման նախադրյալներն ու նորովի մոտեցումները հանգեցնում են մեդիակրթության հայեցակարգային դրույթների փոփոխության անհրաժեշտության: Մեր կողմից մշակված նորորարական մեթոդական մոդելն ու մեդիակրթական եզրույթների և հասկացությունների բացատրական բառարանը նպատակաուղղված են կատարելագործելու ապագա ուսուցիչների մեդիագրագիտության ձևավորման գործընթացը:

2. Սահմանվել են մեդիագրագիտության ձևավորվածության տարրական, հենքային, առաջադիմական և մասնագիտական մակարդակներ, մշակվել են դրանք որոշող չափանիշներն ու ցուցանիշները:

3. Մեդիագրագիտության ձևավորման նպատակով ուսանողների կողմից անիմացիոն տեխնոլոգիաների և տարաչափ ծրագրերի յուրացման և կիրառման գործընթացում առաջացած դժվարությունները ենթակա են հաղթահարման, մեդիակրթական պարապմունքների կազմակերպման ներկայացված ձևերի և եղանակների իրագործման միջոցով:

4. Մեդիագրագիտությունը - արդյունավետ մեդիակրթության վերջնարդյունքն է և ժամանակակից մանկավարժի մասնագիտական հենքային իրազեկությունը:

5. Անիմացիոն տեխնոլոգիաների կիրառման ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մոդելավորված մեթոդական համակարգն ընդգրկում է՝ **նպատակը**, որը կանխորոշում ուսումնական գործընթացում նրա ներդրման ակնկալվող վերջնարդյունքը, **ուղորտները**, որոնք որոշակիացնում են նպատակի իրագործման համար ընտրված առավել նպաստավոր հարթակները, **մեթոդ-**

ները, որոնք, տեսանելի են դարձնում նպատակի իրագործման ձևերն ու եղանակները, ուղղությունները, որոնք ընտրված մեթոդական համակարգն ամբողջացնող և դրանց կիրառման ուղղությունները նախանշող բաղադրատարրեր են, **գնահատումն ու արժևորումը**, որով ամփոփվում են ստացված վերջնարդյունքները և չափվում ուսանողների մեղիագրագիտության ձևավորվածության մակարդակները:

6. Ելնելով մանկավարժական բուհի ուսանողների մեղիագրագիտությունը ձևավորելու նպատակից՝ «Գեղարվեստական կրթության» և «Կուլտուրայի» ֆակուլտետների ուսումնական ծրագրերում ներառել «Մեղիակրթություն» և «Անիմացիայի հիմունքները» հատուկ դասընթացը:

Այսպիսով կատարված աշխատանքով ապացուցվեց, որ մեր կողմից մշակված մեթոդական մոդելի և բացատրական բառարանի ներդրումն ու իրացված փորձարկումը մանկավարժական բուհում, տվել է դրական արդյունք:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են հետևյալ աշխատանքներում.

1. **Մուրադյան Հ.Ս.** Օժտված երեխաների ընդունակությունների բացահայտման խնդիրը համակարգչային անիմացիոն ծրագրերի միջոցով: «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր: Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ: Երկրապահ կամավորական միություն: «ՄԻՄ» տպագրատուն, Վանաձոր., 2015, էջ 245-252:

2. **Мурадян А.С.** Анимация как эффективное средство общего медиаобразования. Сборник статей по материалам 19-ой международной научно-практической конференции “Личность, семья,и общество: Вопросы педагогики и психологии” Изд. “Сибак” N12(57). Новосибирск 2015, с. 27-34.

3. **Muradyan Hakob., Manukyan Armenuhi.** Media literacy as a result in the application of animation technologies in technical education or technotraining. European Journal of Education and Applied Psychologi., N1. Austria, Vienna-2017, p.14-19.

4. Hakob Muradyan. Formation media literacy of students of pedagogical high school in the conditions animation activity. The USA Journal of Applied Sciences.,N 1.-2017, p.17-21.

5. Մուրադյան Հ.Ս. Անիմացիոն տեխնոլոգիաները որպես ուսանողների մեդիագրագիտության ձևավորման արդյունավետ մեթոդ և միջոց: “Մխիթար Գոշ” ամսագիր, N2.Վանաձոր., 2017, էջ 138-143:

6. Մուրադյան Հ.Ս. Շարժանկարային տեխնոլոգիաների ստեղծման և զարգացման պատմական փուլերը: «Մխիթար Գոշ» ամսագիր, N 2.Վանաձոր., 2017, էջ 144-150:

7. Մանուկյան Ա.Մ., Մուրադյան Հ.Ս. Մեդիակրթություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ, «Զանգակ-97» հրատ. Երևան., 2017, 272 էջ, 16 մամուլ:

МУРАДЯН АКОБ САМВЕЛОВИЧ
ПРОБЛЕМА ФОРМИРОВАНИЯ МЕДИАГРАМОТНОСТИ СТУДЕНТОВ С
ПРИМЕНЕНИЕМ АНИМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В ПЕДАГОГИЧЕСКОМ
ВУЗЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 <<Методика преподавания и воспитания>> (изобразительное искусство).

Защита диссертации состоится 30-ого мая 2018 года в 12⁰⁰ на заседании специализированного совета 020 “Педагогика” ВАК при Армянском государственном педагогическом университете им.Х.Абовяна, по адресу: 0010 Ереван, ул.Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Стремительные процессы глобализации и технологизации общества, диктуют необходимость существенных изменений в системе высшего профессионального образования, в частности в плане формирования медиаграмотности студентов педагогических вузов. В условиях тотальной информатизации, образование стало дистанционным и не может быть эффективным без медиаобразования.

Важно подчеркнуть, что медиаобразование рассматривается нами как современная сфера, в которой процесс формирования медиаграмотности студентов становится наиболее эффективным в связи с возможностью активного применения в нем анимационных технологий.

Таким образом, актуальность нашего исследования обусловлена:

- Отсутствием эффективной методики и методической модели формирования медиаграмотности будущих педагогов с применением анимационных технологий.
- Необходимостью разработки в рамках специального учебного курса «Медиаобразование» инновационной методической модели формирования медиаграмотности студентов с применением анимационных технологий и объяснительного словаря медиаобразовательных терминов и категорий.
- Востребованностью включения учебного курса «Медиаобразование» в образовательную программу бакалавриата и специализированного методического модуля «Основы анимации» в учебную программу магистратуры на факультетах «Художественного образования» и «Культуры» АГПУ.

Цель исследования. Формирование медиаграмотности студентов педагогического вуза с применением анимационных технологий

Задачи исследования:

1. Изучить и проанализировать специальную литературу, опыт анимационных школ, традиционные и современные анимационные технологии и разномерные компьютерные программы.
2. Разработать и внедрить в учебный процесс АГПУ специальный учебный курс «Медиаобразование».
3. Разработать и внедрить в учебный процесс новую методическую модель формирования медиаграмотности студентов с применения анимационных технологий и объяснительный словарь медиаобразовательных терминов и категорий.
4. Разработать методическую систему таких форм и приемов, как интернет форумы, медиаклубные обсуждения, фронтальные опросы, построение измененных логических медиарядов, способствующих эффективной организации

медиаобразовательных занятий и формированию медиаграмотности студентов.

5. Разработать критерии и показатели, определяющие уровни сформированности медиаграмотности студентов в результате применения анимационных технологий.

6. Экспериментально проверить и обосновать эффективность и применимость разработанной методической модели формирования медиаграмотности студентов с применением анимационных технологий и объяснительного словаря медиаобразовательных терминов и понятий на практике.

Научная новизна исследования:

- Разработан специальный учебный курс «Медиаобразование».
- Разработана методическая модель формирования медиаграмотности студентов с применением анимационных технологий.
- Создан объяснительный словарь медиаобразовательных терминов и категорий.
- Разработана методическая система таких форм и приемов, как интернет форумы, медиаклубные обсуждения, фронтальные опросы, построение измененных логических медиарядов, способствующих эффективной организации медиаобразовательных занятий и формированию медиаграмотности студентов.
- Разработаны критерии и показатели, определяющие уровни сформированности медиаграмотности студентов в результате применения анимационных технологий.
- Экспериментально проверенна и обоснованна эффективность и применимость разработанной методической модели формирования медиаграмотности студентов с применением анимационных технологий и объяснительного словаря медиаобразовательных терминов и категорий на практике.

Теоретическая значимость исследования обусловлена:

- ❖ Разработкой и внедрением учебной программы и учебника специального курса «Медиаобразование», как теоретической основы формирования медиаграмотности студентов.
- ❖ Созданием объяснительного словаря медиаобразовательных терминов и категорий, где дано четкое определение терминов «анимация» и «медиаграмотность» и разъяснена сущность этих категорий.
- ❖ Теоретическим обоснованием разработанной нами методической модели формирования медиаграмотности студентов с применением анимационных технологий.
- ❖ Сформированной методической системой форм и приемов, способствующих эффективной организации медиаобразовательных занятий и формированию медиаграмотности студентов.
- ❖ Разработанными критериями и показателями, определяющими уровни сформированности медиаграмотности студентов в результате применения анимационных технологий.
- ❖ Взаимосвязью теории и практики формирования медиаграмотности студентов с применением анимационных технологий.

Практическая значимость исследования обусловлена тем, что полученные результаты могут быть использованы:

- В других педагогических вузах, в частности в сфере изобразительного искусства и медиа.
- В процессе внедрения медиаобразования в учебные программы на факультетах «Культуры» и «Художественного образования» АГПУ.

- В переподготовке преподавателей и учителей, с целью формирования их медиаграмотности и повышения уровня профессиональных компетенций.
- С целью повышения степени результативности организации и проведения активной педагогической практики студентов.
- Для определения уровней сформированности медиаграмотности студентов.
- Для внедрения анимационных технологий в систему высшего образования с целью формирования медиаграмотности студентов в результате их эффективного применения.

Объем и структура диссертации. Диссертация объемом 161 страниц (без приложений) компьютерного текста состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений. В ней содержатся 1 таблица, 1 рисунок, 1 график, 6 моделей и 11 диаграмм.

MURADYAN HAKOB
THE PROBLEM OF FORMING THE MEDIA LITERACY OF STUDENTS WITH
APPLICATION OF ANIMATION TECHNOLOGIES IN THE PEDAGOGICAL
HIGHER EDUCATION INSTITUTES

Thesis for the degree of Candidate of Pedagogical Sciences in specialty 13.00.02 «Teaching and Education Methodology» (fine arts).

Defense of the thesis will be held at 12 00 on may 30, 2018 at the session of the Specialized Board 020 "Pedagogy" HAC (Higher Attestaton Commission) to award scientific degrees at Kh. Abovyan Armenian State Pedagogical University. Address: 0010, 17 Tigran Mets ave., Yerevan,

SUMMARY

The relevance of research. Rapid processes of globalization and technological development of society dictate the need for significant changes in the system of higher professional education, in particular in terms of the formation of media literacy for students of pedagogical higher education institutes. In conditions of total digitalization, education has become remote and cannot be effective without media education.

It is important to emphasize that media education is considered by us as a modern sphere in which the process of forming students' media literacy is becoming more effective in connection with the possibility of active application of animation technologies in it.

Thus, the relevance of our study is due to:

- The lack of an effective methodology and a methodical model for the formation of media literacy of future teachers with the use of animation technologies.
- The need to develop an innovative methodical model for the formation of media literacy of students with the use of animation technologies and an explanatory dictionary of media education terms and categories within the special training course «Media Education».
- The need of including the training course «Media Education» in the educational program of the baccalaureate and the specialized methodical module «Basics of Animation» in the curriculum of the master's program at the faculties of «Art Education» and «Culture» of the ASPU.

Purpose of the study. Formation of media literacy of students of a pedagogical higher education institutes with application of animation technologies.

Tasks of the study:

1. To study and analyze special literature, the experience of animation schools, traditional and modern animation technologies and diverse computer software.
2. Develop and implement the special training course «Media Education» in the educational process of the ASPU.
3. Develop and introduce in the educational process a new methodological model for the formation of media literacy students with the use of animation technologies and an explanatory dictionary of media education terms and categories.
4. To develop a methodical system of forms and techniques such as Internet forums, media club discussions, frontal surveys, construction of altered logical media sequences that contribute to the effective organization of media education sessions and the formation of media literacy of students.
5. Develop criteria and indicators that determine the levels of media literacy among students as a result of the use of animation technologies.
6. Experimentally check and prove the effectiveness and applicability of the developed methodological model for the formation of media literacy of students with

the use of animation technologies and an explanatory dictionary of media education terms and concepts in practice.

Scientific novelty of the study:

- A special training course «Media Education» was developed.
- A methodological model for the formation of media literacy of students with the use of animation technologies was developed.
- An explanatory dictionary of media education terms and categories was created.
- A methodical system of forms and techniques such as Internet forums, media club discussions, frontal surveys, construction of altered logical media sequences contributing to the effective organization of media education sessions and the formation of media literacy of students was developed.
- Criteria and indicators of the levels of media literacy of students developed due to the application of animation technologies were developed.
- The effectiveness and applicability of the developed methodological model for the formation of media literacy of students with the use of animation technologies and an explanatory dictionary of media education terms and categories were experimentally tested and proved in practice.

The theoretical significance of the study is due to:

- ❖ Development and implementation of the curriculum and textbook of the special course «Media Education», as a theoretical basis for the formation of media literacy of students.
- ❖ Creation of an explanatory dictionary of media education terms and categories, where the terms «animation» and «media literacy» are clearly defined and the essence of these categories is explained.
- ❖ Theoretical justification for the methodological model of the media literacy of students with the use of animation technologies developed by us.
- ❖ Formed methodical system of forms and techniques that contribute to the effective organization of media education classes and the formation of media literacy for students.
- ❖ Developed criteria and indicators that determine the levels of media literacy for students as a result of the use of animation technologies.
- ❖ Interrelation of the theory and practice of formation of media literacy of students with application of animation technologies.

The practical significance of the study is due to the fact that the achieved results can be used:

- In other pedagogical higher education institutes, in particular in the field of fine arts and media.
- In the process of introducing media education into the curricula at the faculties of «Culture» and «Art Education» of the ASPU.
- To retrain professors and teachers, with the aim of forming their media literacy and raising the level of professional competence.
- To increase the effectiveness of the organization and conduct active pedagogical practice of students.
- To determine the levels of media literacy for students.
- To introduce animation technologies into the higher education system in order to form students' media literacy as a result of their effective application.

Volume and structure of the dissertation. The thesis of 161 pages (without attachments) of the computer text consists of an introduction, three chapters, conclusion, bibliography and attachments. It contains 1 table, 1 figure, 1 graph, 6 models and 11 diagrams.